“STEP BY STEP” BENEVOLENT FOUNDATION
«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0033, Գյուլբենկյան 31, բն. 20,
հեռ.: (+374 10) 22-69-96, էլ. փոստ office@sbsbf.am

Հարգելի գործընկերներ,

Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ «Քայլ առ քայլ» ԲՀ-ը ընդգրկվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկում: Վերապատրաստումները իրականացվելու են առկա և հեռավար ձևաչափերով:

Մեր կազմակերպությանը ընտրելու դեպքում խնդրում ենք մանկապարտեզի և վերապատրաստվող մասնագետների տվյալները ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին. office@sbsbf.am

Համակցված վերապատրաստումների առկա բաղադրիչը կկազմակերպի հետևյալ քաղաքներում. **Երևան, Եղեգնաձոր, Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան, Գյումրի:**

Մյուս մարզերի մասնագետների համար վերապատրաստումները կիրականացվեն հեռավար ձևաչափով:

Գրանցման հայտը տեղադրված է հետևյալ կայքում՝ https://www.facebook.com/sbsbf.am

Վերապատրաստման ընդհանուր կառուցվածքը

Սույն վերապատրաստման դասընթացը մշակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման չափորոշչի, ծրագրի և օրինակելի ծրագրի թեմատիկ պլանի հիման վրա:
Վերապատրաստումները իրականացվելու են 110 ժամ ծավալով:
Վերապատրաստումները իրականացվելու են հետևյալ ժամանակացույցով.
ծրագրի մեկնարկից սկսելու ենք աշխատել աշխատանքային և հանգստյան օրերով, 8 ժամյա կամ 4 ժամյա գրաֆիկով, կազմակերպության կողմից նախապես ընդունված և հաստատված օրակարգով: Վերապատրաստումները իրականացվելու են հեռավար և առկա ձևաչափերով: Հաշվի առնելով տարածաշրջանային խնդիրները, որոշ դեպքերում կիրականցվեն համակցված:
Նախատեսված ծրագրային 110 ժամը տրոհված է 7 բաժինների՝ հետևյալ համամասնությամբ.
Բաժին 1. «Նախադպրոցական կրթության բնագավառի օրենսդրություն» - 10 ժամ՝ 1 միավոր - հեռավար
Բաժին 2. «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը կրթական գործընթացում» - 15 ժամ՝ 1 միավոր - հեռավար
Բաժին 3. «Տարիքային հոգեբանություն» - 20 ժամ՝ 1,5 միավոր - հեռավար
Բաժին 4. «Համընդհանուր ներառում» - 10 ժամ՝ 1 միավոր - հեռավար

Բաժին 5. «Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման և կրթական արդյունքների գնահատում» - 10 ժամ՝ 1 միավոր - առկա
Բաժին 6. «Նախադպրոցական դաստիարակության մեթոդիկաներ» - 40 ժամ՝ 3 միավոր - առկա
Բաժին 7. «Հետազոտական աշխատանք կատարելու սկզբունքները» - 5 ժամ՝ 2 ,5 միավոր

Հետազոտական աշխատանքն իրականացվում է վերապատրաստման ամբողջ ընթացքում:
Մասնակիցը համարվում է դասընթացն ավարտած առնվազն 9 միավոր հավաքելու դեպքում:

Կրեդիտները հավաքում են ուսուցչի մասնակցության առնվազն ⅔ -ի, ամփոփման աշխատանքից ապահովելով առնվազն 75% արդյունքով, ներկայացնելով հետազոտական աշխատանք՝ պահանջված չափանիշներով: